

3.

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ECONOMICS
ЭКОНОМИКА

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՆԱԿՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,
ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի դեկան
Էլփոստ՝ s.amirkhanyan@gsu.am

ԱՐԲՆԱՄՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի
«Հաշվապահական հաշվառում և հարկում» բաժնի
4-րդ կուրսի ուսանողուհի
Էլփոստ՝ anahitabrahamyanyan2000@mail.ru

Տնտեսվարող սուբյեկտների արդյունավետ գործունեությունը երկրի սոցիալ-տնտեսական կայուն զարգացման երաշխիքն է, իսկ նրանց կողմից ստանձնած պարտավորությունները ժամանակին և ամբողջ ծավալով չկատարելու հետևանքով տնտեսությունում կարող են առաջանալ սնանկության գործընթացներ: 2020 թվականից, պայմանավորված Բովիդ-19 համավարակով, ողջ աշխարհը առերեսվել է ճգնաժամի հետ, որը լուրջ հիմնախնդիր է առևտրային կազմակերպությունների անընդհատ և շահութաբեր գործունեության իրականացման համար: ՀՀ-ն բացառություն չէ, դեռ ավելին, պարերազմական իրավիճակը ավելի խորացրեց ճգնաժամը՝ մեծացնելով կազմակերպություններում առկա անվճարունակության խնդիրները: Ուստի ներկայումս, առավել քան երբևէ, արդիական է անդրադարձը ՀՀ-ում սնանկացման գործընթացի իրավական կարգավորմանը:

Հոդվածում ուսումնասիրվել է ՀՀ սնանկության օրենսդրության իրավական կարգավորումը և դրանում առկա բացթողումները: Որպես թեմայի ուսումնասիրության արդյունք՝ կարելի է պնդել, որ կազմակերպությունների անվճարունակությունը որոշելու համար սահմանափակ ցուցանիշների խմբի մշակումը և օրենսդրության մեջ ֆինանսական առողջացմանը նախապատվություն տալը կարող է նշանակալիորեն հստակեցնել և բարելավել առկա օրենսդրությունը: Հայաստանյան շուկայական պայմաններում գործող առևտր-

րային կազմակերպությունների համար սնանկացման կանխարեսման մոդելի մշակումը անհրաժեշտություն է սնանկության հնարավոր վտանգը կանխորոշելու և հետագա կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու համար եքսպրտ:

Բանալի բառեր՝ սնանկության գործող ընթացակարգեր, սնանկության կառավարիչ, ֆինանսական վիճակի վերլուծություն, սնանկության հավանականության գնահատման մոդել, սահմանափակ ցուցանիշների խումբ:

Տնտեսվարող սուբյեկտների սնանկացումը հատուկ է շուկայական տնտեսության տարերայնությանը և ոչ պլանային զարգացման արդյունք է: Դրանով դրսևորվում է տնտեսվարող սուբյեկտի անվճարունակությունը, իսկ հետագայում՝ ֆինանսատնտեսական գործունեության անհնարինությունը¹: Տնտեսագիտության մեջ կան տարբեր տեսակետներ «անվճարունակություն» և «սնանկություն» եզրույթները որպես հոմանիշներ ընդունելու մոտեցման վերաբերյալ: Ամփոփ ներկայացնենք մի խումբ հեղինակների տեսակետը. անվճարունակությունը պարտավորության վճարման անկարողությունն է (դրամական միջոցների ժամանակավոր պակաս և այդպիսի անվճարունակությունը հնարավոր է կանխել), իսկ սնանկությունը՝ անվճարունակության դատական հաստատումը, այսինքն՝ տնտեսվարող սուբյեկտի՝ փաստաթղթերով հաստատված անընդունակությունն է՝ վճարել իր պարտքային պարտավորությունները և միջոցների բացակայության պատճառով ֆինանսավորել ընթացիկ գործունեությունը²:

Հարկ է նշել, որ ՀՀ-ում սնանկության իրավահարաբերությունները և իրավական նորմերը կարգավորում է 2006թ. «Սնանկության մասին» ՀՀ օրենքը: Համաձայն ՀՀ «Սնանկության մասին» օրենքի երրորդ հոդվածի՝ պարտապանը կարող է սնանկ ճանաչվել դատարանի վճռով՝ սեփական նախաձեռնությամբ կամ պարտատիրոջ պահանջով, եթե պարտապանն անվճարունակ է: Այլ կերպ ասած՝ սնանկության հիմքը անվճարունակությունն է³:

¹ Բայադյան Ա., Ֆինանսական վերլուծություն, Երևան, Լիմուշ, 2008, էջ 205-210:

² Ткачев. В. Н., Несостоятельность (банкротство) в РФ, 2-е издание, Москва, 2006, с. 56

³ <http://www.irtek.am>

ՀՀ-ում սնանկության գործերի վերաբերյալ վերջին 5 տարիների վիճակագրական տվյալները փաստում են, որ ավելի քան 5000 սնանկ ճանաչված կազմակերպությունների ցանկից ֆինանսական առողջացման դեպքերը եզակի են¹, իսկ համաձայն Համաշխարհային բանկի «Գործարարություն 2020» (Doing Business) զեկույցի՝ «անվճարունակության հիմնախնդրի լուծում» ամփոփ ցուցիչով ՀՀ-ն զբաղեցնում է 95-րդ տեղը (Վրաստանը՝ 64-րդ տեղը, Ադրբեյջանը՝ 47-րդը)², որը բավականին ցածր ցուցանիշ է տարածաշրջանում: Վերոնշյալները փաստում են, որ ՀՀ-ում առկա է ֆինանսական առողջացման ոչ բավարար մակարդակ և սնանկացման եզրին գտնվող կազմակերպությունները հազվադեպ են հաղթահարում ճգնաժամը:

Հարկ է նշել, որ անվճարունակության գործընթացի կարգավորման լավագույն ցուցանիշներ ունեցող երկրներում լիկվիդային գույքի օգտագործմամբ ստեղծվում են նոր կազմակերպություններ կամ այդ գործընթացի արդյունքում կազմակերպությունները ոչ թե լուծարվում են, այլ վերակազմակերպվում: Դա անվճարունակության գործընթացը դարձնում է առավել արդյունավետ և հանգեցնում ամբողջ տնտեսության առողջացմանը: 2015-2020թթ.-ի ընթացքում ֆինանսապես առողջացած կազմակերպությունների սակավ թիվը փաստում է, որ ՀՀ-ում պատկերն այլ է, առկա է տնտեսագիտական և իրավական տեսանկյունից ցածր արդյունավետություն: Իրականացված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նախկինում օրենսդրության ցածր արդյունավետությունը պայմանավորված էր սնանկության կառավարիչների՝ սահմանված վարձատրության եղանակով, որը մոտիվ էր հանդիսանում սնանկության կառավարիչների համար՝ սնանկության գործի վարույթն ավարտել սեղմ ժամկետներում և լուծարել կազմակերպությունը, այլ ոչ թե նպաստել ֆինանսական առողջացմանը: Սակայն պետք է փաստել, որ չնայած օրենսդրությունը դեռևս անկատար է, այնուամենայնիվ, իրականացվել են որոշակի բարելավումներ՝ կապված սնանկության կառավարիչների վարձատրության բարձրացման և վարձատրման եղանակի հետ: Բացի դրանից՝ ավելի են խստացվել նրանց որակավորման հետ կապված պահանջները. արդյունքում սնանկության կառավարիչները, ունենալով համապատասխան որակավորում և ունակություններ, կկարողանան բացահայ-

¹ <http://www.datalex.am> , էլեկտրոնային կառավարման և տեղեկությունների տրամադրման հանրային տեղեկատվական համակարգ (դիտման ամսաթիվը՝ 21.02.2021թ.):

² Համաշխարհային Բանկի «Գործարարություն 2020» (Doing Business) զեկույց, հասանելի է՝ <https://www.doingbusiness.org/en/data/exploretopics/resolving-insolvency>



տել կանխամտածված սնանկության նախանշանները՝ կատարելով կազմակերպության ֆինանսատնտեսական վերլուծություն: Նկատենք, որ դա կհանգեցնի կանխամտածված սնանկության հնարավոր ռիսկի նվազեցմանը:

Նշենք, որ սնանկության գործող ընթացակարգերից յուրաքանչյուրի դեպքում սնանկության վերաբերյալ գործը կարող է ավարտվել տնտեսվարող սուբյեկտի լուծարմամբ կամ դատարանի կողմից ֆինանսական առողջացման ծրագրի հաստատմամբ:

Օրենքը սահմանում է նաև սնանկության վտանգի վարույթի դրույթներ, այսինքն՝ ՀՀ-ում պարտապանի կողմից սեփական սնանկությունը ճանաչելու կամ սնանկության վտանգի դիմումը բավարարելու և ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելու դեպքում կարող է տեղի ունենալ վերակազմակերպում: Վերջինս անվճարունակ պարտապանին հնարավորություն է տալիս շարունակելու իր գործունեությունը՝ միաժամանակ թույլատրելով պարտապանի նկատմամբ իր գործունեության ֆինանսական բարելավմանն ուղղված միջոցառումների կիրառումը և բավարարելու իր պարտատերերի պահանջները՝ հիմք ընդունելով պարտատերերի կողմից ընդունված և դատարանի կողմից հաստատված վերակազմակերպման ծրագիրը:

Ակնհայտ է, որ սնանկացումը, որպես այդպիսին, միանգամից չի դրսևորվում, սնանկացման նախադրյալները բազմազան են: Դրանք կարող են լինել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին բնույթի բազմաթիվ գործոնների ազդեցության արդյունք: Կայուն տնտեսական և քաղաքական համակարգերով զարգացած երկրներում տնտեսվարող սուբյեկտների սնանկացումը 1/3-ով կախված է արտաքին գործոններից, իսկ 2/3-ով՝ ներքին գործոններից¹: Որպես կանոն, սնանկությանը նախորդում են կազմակերպությունում առկա ֆինանսատնտեսական լուրջ հիմնախնդիրներ, ուստի կարևոր է կազմակերպության ֆինանսական կայունության, հետագա գործունեության անընդհատության վրա այդ գործոնների հնարավոր ազդեցության գնահատումը: Տնտեսվարող սուբյեկտի համար օրենքով սահմանված ցանկացած ընթացակարգի կիրառման դեպքում անհրաժեշտ պայման է պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծության իրականացումը, որի ձևը սահմանվում է Հա-

¹ Մաթևոսյան Ա., Արտադրական կազմակերպության ֆինանսական վիճակի գնահատման և կայունացման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2009, էջ 163:

յաստանի Հանրապետության արդարադատության նախարարի ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով¹: Սակայն պետք է արձանագրել, որ դեռևս չկա ֆինանսատնտեսական վերլուծության իրականացման համար հստակ սահմանված գործիքակազմ:

Այս համատեքստում կարևոր է սնանկացման կանխատեսման հիմնախնդիրը և սնանկացման ռիսկի գնահատումը այն ժամկետում, որը բավարար կլինի կոնկրետ ժամանակահատվածում որոշումների կայացման և իրականացման համար: Ժամանակակից տնտեսագիտության մեջ առկա են արտադրական կազմակերպության սնանկության հնարավոր վտանգի կանխատեսման և գործունեության վերլուծության ոլորտին վերաբերող բազմաթիվ հաշվարկման մեթոդներ: Դրանք ենթադրում են տնտեսավիճակագրական մեթոդներ, որոնք հիմնված են կազմակերպության ֆինանսական կայունության և վճարունակության վրա ազդող տարբեր գործոնների մշակման մոդելների վրա²: Այդ ոլորտում իրենց կարևոր դերակատարումն են ունեցել տնտեսագետներ Ո. Բիվերը և Է. Ալտմանը, որոնց նախաձեռնությամբ էլ ձևավորվել է սնանկացման հարցերով զբաղվող տնտեսագիտական ուղղությունը³: Վերոնշյալ սնանկության հավանականության գնահատման մոդելները, չնայած կիրառման բարձր ճշտության, ամբողջությամբ չեն արտացոլում հայաստանյան շուկայական պայմաններում գործող առևտրային կազմակերպությունների ֆինանսական կայունության վրա ազդող բոլոր գործոնները:

Այսպիսով, կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում ակնհայտ է դառնում, որ կազմակերպությունների անվճարունակությունը որոշելու համար սահմանափակ ցուցանիշների խմբի (իրացվելության, վճարունակության, սեփական շրջանառու կապիտալով ապահովվածության և այլն), ներառյալ դրանց նշանակության, հաշվարկելու եղանակների և տնտեսության առանձին ոլորտների (կախված առանձնահատկություններից) համար նորմատիվների մշակումը կարող է նշանակալիորեն հստակեցնել և բարելավել առկա օրենսդրությունը: Իսկ հայաստանյան շու-

¹ <https://www.arlis.am/documentview.aspx?docID=140260>

² Բայադյան Ա.Հ., ՀՀ ագրովերամշակող արտադրական կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության և ռիսկերի գնահատման հիմնահարցերն ու լուծման ուղիները, Մ.Քոթանջյանի անվ. տնտես. ինստիտուտ, Երևան, Լիմուշ, 2017, էջ 164-184:

³ Մաթևոսյան Ա., Արտադրական կազմակերպության ֆինանսական վիճակի գնահատման և կայունացման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2009, էջ 167:

կայական պայմաններում գործող առևտրային կազմակերպությունների համար անհրաժեշտություն է սնանկացման կանխատեսման մոդելի մշակումը, որը հնարավորություն կընձեռի հաշվի առնել նաև ոլորտային առանձնահատկությունները: Վերջինիս մշակումը կարող է կազմակերպության սնանկության հնարավոր վտանգը կանխորոշող ազդակ և հիմք հանդիսանալ հետագա կանխարգելիչ միջոցառումների իրականացման համար:

Հավելենք նաև, որ օրենսդրության կիրառման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է այնպիսի ընթացակարգի մշակում, որն առավել օգտակար կարող է լինել տնտեսագիտական տեսանկյունից և երկարաժամկետ հատվածում, այն է՝ օրենսդրության մեջ նախապատվությունը տալ ֆինանսական առողջացմանը (ներկայումս ՀՀ օրենսդրությունը այնպիսին է, որ սնանկության գործերի մեծամասնությունը ավարտվում է լուծարմամբ):

Օգտագործված գրականության ցանկ

1. Բայադյան Ա. Հ., ՀՀ ագրովերամշակող արտադրական կազմակերպությունների ֆինանսա-տնտեսական գործունեության և ռիսկերի գնահատման հիմնահարցերն ու լուծման ուղիները, Մ. Քոթանջյանի անվ, տնտես. ինստիտուտ, Երևան, Լիմուշ, 2017, էջ 164-184:
2. Բայադյան Ա., Ֆինանսական վերլուծություն, Երևան, Լիմուշ, 2008, էջ 205-210:
3. Համաշխարհային Բանկի «Գործարարություն 2020» (Doing Business) զեկույց, հասանելի է՝ <https://www.doingbusiness.org/en/data/exploretopics/resolving-insolvency>
4. Մաթևոսյան Ա., Արտադրական կազմակերպության ֆինանսական վիճակի գնահատման և կայունացման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2009, էջ 163-167:
5. Վարազդատ Հարությունյան, Ֆինանսական առողջացման եվ լուծարման հավասարակշռման անհրաժեշտությունը սնանկության վարույթում: ընդհանուր մոտեցումներ, Երևան, 2019:
6. Ткачев. В. Н., Несостоятельность (банкротство) в РФ, 2-е издание, Москва, 2006, с. 56
7. <https://www.arlis.am/documentview.aspx?docID=140260>
8. <http://www.datalex.am>, էլեկտրոնային կառավարման և տեղեկությունների տրամադրման հանրային տեղեկատվական համակարգ (դիտման ամսաթիվը՝ 21.02.2021թ.):
9. <http://www.irtek.am>



LEGAL REGULATION OF BANKRUPTCY OF THE TRADING ORGANIZATIONS

AMIRKHANYAN SAMVEL

*PhD in Economics, Associate Professor,
Dean of the Faculty of Economics, GSU*

e-mail: s.amirkhanyan@gsu.am

ABRAHAMYAN ANAHIT

*4th- year student of the Department of Accounting and Taxation,
Faculty of Economics, GSU*

e-mail: anahitabrahamyan2000@mail.ru

The effective activities of the business leaders are a guarantee for the socio-economic stable development of the country, and if they do not do their duties on time and completely, there may be some processes of bankruptcy in economy. Since 2020, because of Covid-19, the whole world has faced a crisis, which is a huge problem for companies to carry out a permanent and continuous activity. The Republic of Armenia is not an exception; moreover, the martial situation aggravated the crisis increasing the problems of insolvency in companies. Thus, nowadays, more than ever, it is actual to refer to managing the process of bankruptcy in the RA in a legal way. The legal management of bankruptcy legislation in the RA and the above mentioned omissions are discussed. As a result of the thematic research, we can affirm that creating a group of limited indicators for defining the insolvency of companies and giving preference to the financial recovery in legislation may significantly clarify and improve the existent legislation. And creating a model for predicting the bankruptcy of the commercial organizations operating in the terms of the Armenian market is a need in the context of predicting the possible danger of bankruptcy and carrying out the further preventive events.

Key words: Processes of bankruptcy, bankruptcy manager, financial situation analysis, model of the assessment of the probability of bankruptcy, limited indicators.

ПРАВОВОЕ РЕГУЛИРОВАНИЕ БАНКРОТСТВА ТОРГОВЫХ ОРГАНИЗАЦИЙ

АМИРХАНЫАН САМВЕЛ

*Кандидат экономических наук, доцент,
Декан экономического факультета ГГУ*
электронная почта: s.amirkhanyan@gsu.am

АБРААМЯН АНАИТ

*Студентка 4 курса отделения “Бухгалтерский учет и
налогообложение” экономического факультета
Гаварского государственного университета ,*
электронная почта: anahitabrahamyan2000@mail.ru

Эффективная деятельность хозяйствующих субъектов является залогом устойчивого социально-экономического развития страны, а в результате неисполнения взятых на себя обязательств в полном объеме в экономике могут возникать процессы банкротства. С 2020 года из-за эпидемии Covid-19 весь мир столкнулся с кризисом, который является серьезной проблемой для непрерывной прибыльной работы коммерческих организаций. Армения не исключение, военная ситуация еще больше усугубила кризис, увеличив проблемы неплатежеспособности организаций. Поэтому сейчас, как никогда, актуальна ссылка на правовое урегулирование процесса банкротства в Армении. В статье исследуется правовое регулирование и существующие упущения в законодательства РА о банкротстве. В результате изучения темы можно утверждать, что разработка ограниченного набора показателей для определения неплатежеспособности организаций и отдавая предпочтение финансовому оздоровлению в законодательстве, может существенно прояснить и усовершенствовать действующее законодательство. А для коммерческих организаций, работающих в условиях рынка Армении, разработка модели прогнозирования банкротства является необходимостью в контексте определения возможного риска банкротства и принятия дальнейших превентивных мер.

Ключевые слова: Процедуры банкротства, банкротный менеджер, анализ финансовой ситуации, модель оценки вероятности банкротства, ограниченные показатели.

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 13.08.2021թ.:

Հոդվածը գրախոսվել է 11.09.2021թ.: